Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Սքեչսաշ
խեղագիր Սիրաան

Բիթլիս 1909.

հատուած
Ա-13

1342

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՖԻԼԻԱՆՑ

ԽԵՎԱԳԱՐ ՄԻՆԱՍ

ՊՈԼԻՍ ՄԻ ԴԵՐԹՈՂՈՒԹԵՄԲԻ

ԹԻՖԼԻՍ
տպագրեալ «ՊՐՈԳՐԵՍ» Բակ. Տպագրութիւն Т-ва «ПРОГРЕССЪ»
Вельяминовская, 7.
1909

Էջ հիսուներեք
Ա-13

«Հեղափոխ» արգոյ խմբագրատան

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱԼԻԼԵԱՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
R.S.F.S.R. Armenian Public Library
7/II-1922
Մոսկվա, Մոսկվորեցի
Ա. ՍՍԱՄՍԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԽԵԼԱԳԱՐ ՄԻՆԱՍ

ՊԻԷՍ ՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵՄԲ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
«ՊՇԱԿ»
ԼՐԱԳՐԻ

Թիֆլիս
Տպարան «ՊՐՕԳՐԷՍ» Ընկ. | Типографія Т-ва «ПРОГРЕССЪ»
Вельяминовская, 7.
1909

1520

Настоящая піеса подъ загл. »Сумашедшій Минасъ« разрѣшена г. Главноначальствующимъ для представленія на сцѣнахъ края, марта 30-го дня 1902 г.

Тифлисъ.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԻՆԱՍ	հարուստ վաճառական . . .	60 տ
ՂՈՒԿԱՍ	նրա եղբայրը	55 »
ԹՈՄԱՍ	նոյն	50 »
ԳԱՅԻԱՆԷ	նրա կինը	50 »
ՕՀԱՆ	նրա ծառան	25 »

Անցքը տեղի է ունենում Թիֆլիզում 1900 թ.

Շքեղ առանձնասենեակ. մէջտեղ եւ աջ դռներ։ Ձախ կողմը պատուհան. սրա առաջ մեծ գրասեղան՝ վրան թանաքաման, գրիչ, համբիչ, մի թերթ գրած թուղթ. տակին զամբիւղ։ Աթոռներ, գորգ, պատկերներ եւայլն։

ՑԵՍԻԼ 1.

ԳԱՅԻԱՆԷ ԵՒ ՕՀԱՆ

ԳԱՅԻԱՆԷ (սեղանի մօտ նստած լայ է լինում)։— Ի՞նչ պատահեց քեզ, Մինաս. ինչու՞ խելագարվեցիր, օրս սևացրիր։

ՕՀԱՆ.—Աղջիկ պարոն, մարդ է՝ գժվել է. էլի խելքի կըգայ, հերիք փչացնես էդ նախշուն աչքերդ։

ԳԱՅԻԱՆԷ.—Ախար ի՞նչ պատահեց նրան, Օհան։

ՕՀԱՆ.—Ես իմ կարճ խելքովս այնպէս եմ կարծում, որ փողի շատութիւնից է։

ԳԱՅԻԱՆԷ.—Ի՞նչ ես յիմար փիլիսոփայութիւններ անում։

ՕՀԱՆ.—Ասենք թէ՝ մի կողմից ես հասկանում եմ քո միտքը.—այսինքն թէ՝ աւելի լաւ է շուտ անի ոտքերը ձգի, դու էլ ազատվես։

ԳԱՅԻԱՆԷ.—Լիրբ, անպիտան, ինչի՞ ես բարբանջում...

ՕՀԱՆ.—Ի՞նչ է, աղջիկ պարոն. ինչդ կըպակսի։ Ես լինեմ քո տեղ, մազի չափ էլ հոգ չեմ անիլ։ Աստուած վկայ։ Հէնց որ մեռաւ, մի էնպէսի առօք-փառօք թաղում սարքենք, որ ինքն էլ զարմանայ։

ԳԱՅԻԱՆԷ.—Ջե՞ս պապանձվելու, անամօթ, անզգամ։

ՕՀԱՆ.—Ախար հարուստ մարդը մեռնելուս կնիկը ինչո՞ւ պիտի լաց լինի։ Ի՞նչ է, հաճդ էր պակաս լինելու, թէ՞ ջուրդ։ Փառք Աստծոյ, էնքան փող ունէք, որ հաշիւն էլ չէք իմանում։ Ասենք թէ՝ էդ պօլիտիկան հարկաւոր բան է. չէ՞ որ տեսնողների աչքը պէտք է քոռացնել։ Ժամի գռնում մի փոքր կրճղճղաս, երեսդ կրճանկոտես, սուտ-սուտ ուշագնաց կըլինես, ես էլ մի բաժակ սառ ջուր կածեմ կոկորդդ ու պրծաւ։

ԳԱՅԻԱՆԷ.—Աւանակ, անպիտան։

ՕՀԱՆ.—Մի ամսից յետոյ էլ սև շորերդ կը քցես մի կողմ ու մի լաւ ատուդենտի կը գնաս։

ԳԱՅԻԱՆԷ.—Հոգեմ գիժ գլուխդ։

ՕՀԱՆ.—Ի՞նչ է, կարծում ես չե՞ն ուզիլ. դու մէկ փողի անուն տուր, տես ինչպէս կը թափվեն ոտքերիդ։

ԳԱՅԻԱՆԷ.—Այդպէս խելօք ես, ինչո՞ւ հօրդ մեռնելուս մօրդ նոյն խորհուրդը չտուիր։

ՕՀԱՆ.—Էդ ի՞նչ խօսք է, աղջիկ պարոն։ Մենք ո՞ւրտեղ, դուք ո՞ւրտեղ։ Հայրս արեխները ծակ, գը-

գակի բամբակը դուրս եկած մեռաւ. մենք քիչ մնաց քաղցած կոտորվէինք։

ԳԱՅԻԱՆԷ.—Թող քո մայրդ էլ մարդու գընար էլի։

ՕՀԱՆ.—Օժիտը շատ էր, տանը մնաց։

ԳԱՅԻԱՆԷ.—Ինչքան էր։

ՕՀԱՆ.—Ութ։

ԳԱՅԻԱՆԷ.—Ութ ինչ։

ՕՀԱՆ.—Ութ լակոտ, ութն էլ աղտոտ։ Է՛հ, աղջիկ պարոն, դու մի լաց լինիլ, թող ինքը լաց լինի, որ աշխատածը չկարողացաւ ուտել, որ կապէկի համար հոգին էր դուրս գալիս։

ԳԱՅԻԱՆԷ.—Զայնդ կտրիր, յիմար, անըզգամ...

ՕՀԱՆ.—Հը՛, դէ ես մեղայ Աստծոյ. լաց եղիր, տեսնեմ լացով լորի կեփվի՞, թէ ոչ։

ԳԱՅԻԱՆԷ.—Օ՛ֆ, ճշմարիտ ես ասում. գնամ տեսնեմ գլխիս ինչ ճար եմ տեսնում։ Դու նրան լաւ նայիր, Օհան. քո վարձը չի կորչիլ մեզ վրա. մի՛ վախիլ, նա քեզ չի ծեծիլ։ (Գնաց լալով, միջի դռնով)։

ՏԵՍԻԼ 2.

ՕՀԱՆ և ՄԻՆԱՍ

ՕՀԱՆ (մենակ).—Հը՛մ, հեշտ է ասելը գժից մի՛ վախիլ։ Կեանքումս մէկ օձից կը վախենամ, մէկ մուք գիշեր տկլոր պառաւից, մէկ էլ խելագարից։

Դէ գժից չվախենամ, հէնց կերթամ դոկտոր կը դառնամ էլի։ Չեմ իմանում, էդ ինչու էդպէս փչացաւ աշխարհը։ Սրանից առաջ մէկ գժի համբաւը լսելուս քսան վերստից էինք վազում տեսնելու, հիմի հօ որ կողմ պտտես, մի խելքը գլխի մարդու չես հանդիպիլ։ Խեղճս աղջիկ պարոնիս է գալիս. բարի կնիկ է. օրական պրովիզիի փողից որ 2 մանէթ էլ խփում եմ, բանի տեղ չի քցում։

ՄԻՆԱՍ (ներսից).—Օհան, Օհան։

ՕՀԱՆ (փախաւ միջի դռան մէջ).—Գալիս է։ Տէր, դու ինձ անօգնական չթողնես։

ՄԻՆԱՍ.—Օհան, Օհան։ (Եկաւ աջ դռնով հագին խալաթ, գլխին սպիտակ շոր կապած)։ Որտեղ ես կորել։

ՕՀԱՆ.—Էստեղ եմ, պարոն, Էստեղ։

ՄԻՆԱՍ.—Մօտ եկ, բան եմ ասում։

ՕՀԱՆ.—Գիտեմ ինչ ես ասում... բայց էլ քոր եկող տեղ չես թողել։

ՄԻՆԱՍ.—Մօտ եկ, ասում եմ. բան ունեմ ասելու։ (Նստեց սեղանի մօտ)։

ՕՀԱՆ.—Ա՛յ, էդ ինձ դուր եկաւ. նստիր քեզ համար, ինչքան կուզես՝ խօսիր, հա խօսիր։ Փառք Աստծոյ, ես էլ մօրից խուլ չեմ ծնվել. ականջներս սրած մեծ ախորժակով քեզ ականջ եմ դնում. տակից-գլխից դուրս տուր տեսնենք։

ՄԻՆԱՍ.—Ես դաղտնիք ունեմ քեզ յայտնեելու. ուրիշը չպէտք է լսի։

ՕՀԱՆ.—Էստեղ ոչոք չկայ. էդ աչքիդ է երևում. խոսիր ինչքան կուզես։

ՄԻՆԱՍ (քիչ-քիչ բարկանալով)։ — Ասում եմ քեզ յայտնելու գաղտնիք ունեմ։

ՕՀԱՆ.—Պահիր գաղտնիքդ աղջիկ պարոնիդ համար։ Ես քո ինչն եմ որ։

ՄԻՆԱՍ.— Իմ հաց չես ուտում։

ՕՀԱՆ.—Շատ էլ. որ շան նման չչարչարվեմ, ինձ հաց կը տաս։

ՄԻՆԱՍ.—Ձե՞զ ուզում լսել գաղտնիքս։

ՕՀԱՆ.—Ախար գիժն ինչ է, որ նրա գաղտնիքը ինչ լինի։ Պարոն, ընտանիքի տէր ես, Պարիժ կարդացող տղերք ունես, արի փեշիդ քարը դէն թափիր, խելքի եկ։ Էն սուրբ մեռոնը վկայ, գժութիւնը մարդուս հաց չի տալ։ Խեղճս է գալիս քեզ. օր ծերութեան ոտք ու ձեռքդ կը կապոտեն, կողքաճաղերիդ էնքան ճիպոտ կը տան, որ թան լակած շան նման օխտ օր կը մռմռաս։

ՄԻՆԱՍ.—Խելքիդ զօռ մի անիլ. մօտ եկ ասում եմ։

ՕՀԱՆ.—Չեմ գալ։ Երէկ էլ բռնել ես կատաղած շան նման ուսերս կծոտել։ Ինչու։ Ճոթոտած մուշտակ ես գտել ինձ, թէ՞ ինձ մայր չի ծնել։ Ախար ամօթ ու յարգն էլ մի լաւ բան է է։ Էդ է քանի օր է էս պրիշակը ինչ ես գժանոց շինել։ Ախար 15 տարեկան գիմնազիստ չես, որ ասեմ դասերդ չես իմանում, կամ սիրահարվել ես։ Ախար մեծ մարդ ես, մին ինքդ քեզ մտածիր, ա-

բարմունքիցդ ամաչիր։ Էդ ինչի՞ ես նման։ Խելքը գլխին մարդը ինչի՞ պիտի գժվի։ Ի՞նչ ես մտածել, որ գժվել ես։ Հասակի՞դ կը սազէր, թէ՞ փոքրը է քաղցած։

ՄԻՆԱՍ.—Տօ, ինչ ես յիմար-յիմար գլխիս շարական կարդում։

ՕՀԱՆ.—Ուրիշ հարուստների կնանիքը զուգված-զարդարված, ոէխմոէխներին ներկեր քսած, երիտասարդների եռևից են ման գալիս, իսկ իմ խեղճ Ջրատար տիկինս, աչքերը լացից կարմրած, սատանայ բռնող պառաւների դռներն է ճպռտում։ Գոնէ մէկ նրան էլ է խղճայիր։

ՄԻՆԱՍ. — Իմ խելագարվելուս պատճառը գաղտնիք է... լսում ե՞ս։

ՕՀԱՆ.—Ինչպէս չէ. հէնց էդ է, որ հաւատացինք։

ՄԻՆԱՍ.—Ասում եմ հաւատա՛, որ սա կեղծ է և շինծու։

ՕՀԱՆ.—Զէ, էլ ինձ խաբել չես կարող։

ՄԻՆԱՍ.—Ես քեզ ասում եմ գաղտնիքը պարզ է... Մօտ եկ... Տօ, ինչ ես որսկան շան նման ականջներդ խլշել։

ՕՀԱՆ.—Ապա, եթէ ճշմարիտ է ասածդ, մէկ երդվիր։

ՄԻՆԱՍ.—Երդվում եմ առաջի Աստծոյ։

ՕՀԱՆ.—Ապա, եթէ սուտ-սուտ էիր գժվել, ինչու՞ էիր դորթ-դորթ կծռտում։

ՄԻՆԱՍ.—Դէ հիմա հօ տեսնում ես, որ մէջ տեղ ուրիշ գաղտնիք է եղել։

ՕՀԱՆ.—Ուսերիս միսը քաղցր էր, հա։ Զէ, կը ներես. էլ կատաղած գազանի ոէխ տալու միս չունենք... բաւական է։

ՄԻՆԱՍ.—Ուրեմն դու ինձ չե՞ս հաւատում։ Այ, տեսնում ե՞ս այս թուղթը. ինձ հարկաւոր է, որ եղբայրներս սրա տակ ստորագրեն, ուրիշ ոչինչ։

ՕՀԱՆ.—Ապա, մարդ Աստծոյ, էդպէս ցոու բանի համար էլ մարդ կը գժվի։ Եթէ փորացաւդ հէնց էդ էր, ինձ ասէիր, ես բանը գլուխ բերէի։

ՄԻՆԱՍ.—Ի՞նչ պիտի անէիր։

ՕՀԱՆ.—Ի՞նչ պիտի անէի. կը բերէի ականջիս կեղտից կը քցէի նրանց գինիի բաժակի մէջ, շան նման կը հարբեցնէի ու թուղթը կը դնէի առաջներին։

ՄԻՆԱՍ.—Դատարկ բան ես ասում։ Դու շուտ արա, գնա նրանց կանչիր։

ՕՀԱՆ.—Իսկ եթէ գործ դնէինք աղաչանք-պաղատանք, մէջտեղ մեծ մարդ քցէինք կամ տէր-տէր...

ՄԻՆԱՍ.—Նրանք մեծի պատիւը ի՞նչ են հասկանում։

ՕՀԱՆ.—Էն ժամանակ կը սեղմէինք սրտներին մի-մի Մաուզէրի հրացան։

ՄԻՆԱՍ.—Նրանք վախեցող գազաններ չեն։

ՕՀԱՆ.—Զէի՞նք կարող գտնել մի վարպետ

մարդ, որ ձեռքը նմանեցնէր նրանց ձեռքին, կամ թէ առաջ մի մաքուր թղթի տակ ստորագրել տային նրանց, յետոյ վերևում գրէիր՝ ինչ որ քեզ պէտք էր։

ՄԻՆԱՍ.—Բանը մի՛ ուշացնիլ, գնա։

ՕՀԱՆ.—Ի՞նչ տաս մարդ վարձեմ երկուսին էլ շան սատակ անել տամ։ Շատ չեն վերցնիլ... հիմա մարդու կեանքի գինը մի սոխի գին է։

ՄԻՆԱՍ.—Այդ ինձ պէտք չէ։

ՕՀԱՆ.—Կարելի է գերի փախցնել տալ ու թուղթը դնել առաջներին։

ՄԻՆԱՍ.—Ֆու՛, բաւական է ասում եմ։ Նախ երդվիր, որ ոչոքի ոչինչ չես ասիլ, ոչ կնոջս, ոչոքի։

ՕՀԱՆ.—Կերդվեմ, ինչու՞ չեմ երդվիլ. քրիստոնեայ չե՞մ... հոգիս էլ դուրս կը գայ ու կերդվեմ... դու միամիտ կաց. այ, իմ նշանածի սուրբ երեսին ոչ արժանի լինեմ, եթէ մէկին ասեմ։ Բայց, պարոն, գժերը երբեմն խելօքից էլ իմաստուն են խօսում. ապա դու էլ երդում կեր, որ ինձ ձեռք չես քցում։

ՄԻՆԱՍ.—Երդվում եմ։

ՕՀԱՆ.—Զէ, ներողութիւն. մինչև չչոքես, Օհանին չես կարող հաւատացնել։

ՄԻՆԱՍ (չոքեց)։—Ահա։ Հիմա հաւատում ե՞ս։

ՕՀԱՆ.—Զէ, խելքը գլխին գժերից է... Պարոն, դէ չոքելը չոքել ես, հէնց մի լաւ էլ աղօթք արա. հօ աղօթքից բացի օգտից մի վնաս չկայ... գուցէ Աստուած լսի աղօթքդ ու բանդ յաջողեցնի։

ՄԻՆԱՍ.—Հը՛, այդ էլ աչքիս վրա։ (Սկսեց աղօթել)։

ՕՀԱՆ.—Տէր, դու լսես ասածը, բայց մէկն էլ է արակումդ չքցես, խեղճ է։ (Գնաց միջի դռնով)։

ՏԵՍԻԼ 3.

ՄԻՆԱՍ և ՆՈՏԱՐ

ՆՈՏԱՐ (միջի դռնով ուզեց մտնել, յետ կանգնեց)։ —Միթէ՞ իրօք նա խելագարվել է։ Զարհուրելի է։ (Հազեց իւր մասին ազդանշան տալով)։

ՄԻՆԱՍ (առանց նրան տեսնելու)։ —Շան ծընունդ, դեռ չե՞ս կորել։

ՆՈՏԱՐ.—Զէ, բանը վերջացած է... Մինայ Զախարիչ, Մինայ Զախարիչ... այդ ես եմ... Նոտար Տուպուռճիկեան...

ՄԻՆԱՍ (կարծեց եղբայրներից է, դժվեց, ելաւ)։—Ա, պառաւ, պառաւ... պառաւ կախարդ... (Նկատեց սխալը, փոխվեց)։ Հը՛... այդ դու՞ք էք, Անդրէյ Մակարիչ։ Ներս համեցէք։

ՆՈՏԱՐ.—Ոչինչ, ոչինչ... ես հէնց...

ՄԻՆԱՍ.—Ինչո՞ւ չէք շնորհ բերում։ Էհ, պառաւեցինք, Անդրէյ Մակարիչ։ Երբ փոքր էինք՝ մեծ լինելու մասին էինք մտածում, պառաւել ենք՝ մանկութիւնն ենք յիշում։

ՆՈՏԱՐ.—Դդուք մմենակ էք...

ՄԻՆԱՍ.—Այո, ի՞նչ կայ որ։

ՆՈՏԱՐ.—Ի՞նչ էիք անում...

ՄԻՆԱՍ.—Սովորական աղօթքս։

ՆՈՏԱՐ.—Բաւական է... ինչ ագօթքի ժամանակ է... Ինչու՞ էք գլուխներդ կապել։

ՄԻՆԱՍ.—Գլուխս է ցաւում... սաստիկ ցուրտ է։

ՆՈՏԱՐ (կողմ)։—Չէ, բանը վերջացած է։ Բայց հիմա ամառն է։

ՄԻՆԱՍ.—Իսկ իմ սենեակս կատարեալ սառցարան։

ՆՈՏԱՐ.—Փրուէ... ինչպէս էլ պատճառաբանում է։

ՄԻՆԱՍ.—Ինչու՞ չէք մօտենում։

ՆՈՏԱՐ.—Վվոչինչ... Իմ ձեզ համար գրած թուղթը ստորագրել տուի՞ք եղբայրներիդ։

ՄԻՆԱՍ.—Բայց դուք ինչու՞ էք վախենում...

ՆՈՏԱՐ.—Հըմ՞մ... ինչու՞ պիտի վախենամ...

ՄԻՆԱՍ.—Չէ, ճշմարիտ... այդ ի՞նչ է դէմքներդ... վախեցա՞ք երևի։

ՆՈՏԱՐ.—Ինչպէ՞ս էլ նկատում է... Ինչի՞ց պիտի վախենամ։

ՄԻՆԱՍ (մօտեցաւ)։—Ապա ինչու՞ չէք գալիս խօսենք... համեցէք քիչ... (բռնեց նրան) եկէք խորհենք...

ՆՈՏԱՐ (բզաւեց)։—Ա՜ա...

ՄԻՆԱՍ (քաշեց նրան առաջ)։—Ախար ինչի՞ց էք վախենում, մարդ։

ՆՈՏԱՐ (սաստիկ վախեցած)։—Աստուած վկայ, չեմ վախենում և ինչի՞ց պիտի վախենայի, և ինչու՞ պիտի վախենայի, և ի՞նչ կայ վախենալու, և

ինձ ինչ կը վայելի վախենալը... Օ՛ֆ, բաց թողէք, գործ ունեմ, կրկնակոշիկս հանեմ.... գղակս դնեմ դրսում... նամակ ունեմ... բան եմ մոռացել... (Ազատվեց)։ Վախենալն էլ խնամք է... (Փախաւ միջի դռնով)։

ՄԻՆԱՍ.—Հա՜ հա՜ հա՜, այ քեզ բան։ Չլինի՞ թէ ղորթ ինձ մի բան է պատահել։ Չէ, պէտք է խելքի գալ։ Այդ ինչու՞ փախաւ խեղճը։ Ես հօ նրա մօտ խելագար չցոյց տուի ինձ։ Չէ, երևի իսկ որ ինձ մի բան է պատահել. իսկ ես, յիմարը, բանը հէնց կատակի եմ քցել։ Կարող է պատահել, որ հէնց ես գժվելով էլ գժվեմ ու էլ խելքի չգամ։ Մէկ էլ, եթէ ինձնում գժութեան հիմք չկայ, ինչպէ՞ս կարող եմ այդպէս լաւ գժվել։ Հա՜ հա՜ հա՜... այ քեզ բան...

ՑԵՍԻԼ 4.

ՄԻՆԱՍ և ՕՀԱՆ

ՕՀԱՆ (միջի դռնից գլուխը ցոյց տալով)։—Պարոն, ճշմարիտն ասա. իմ գնալ-գալու վրա հօ էլի սատանիկներդ չէ՞ն շարժվել։

ՄԻՆԱՍ (վախեցած)։—Ի՞նչ է... ինչու՞ ես էդպէս ապշած... չլինի՞ թէ մի բան ես նկատում։

ՕՀԱՆ.—Չէ, մի վախիլ... Էնպէս բան չկայ, լաւ ես երևում. միայն թէ ասում եմ, չլինի՞ թէ էլի միտքդ փոխված լինի։

ՄԻՆԱՍ.—Զէ, միտքս չի փոխվել, Աստուած վկայ։

ՕՀԱՆ.—Դէ ուրեմն բանդ տես։ Եղբայրներդ գալիս են... Ղուկասը գլխին խփելով «աղբեր վայ» է կանչում... իսկ Թոմասից... (ծոծրակը քորելով) խելքս բան չի կտրում։

ՄԻՆԱՍ.—Դու պէտք է ամեն հնար գործ դընես, որ թղթին ստորագրեն. լսում ե՞ս։

ՕՀԱՆ.—Միամիտ կաց. մի էնպէսի օձի լեզու բանեցնեմ, որ ձեռքիս մոմ շինեմ նրանց։ Բայց դու էլ, պարոն, մարդավարի գժվիր, այ էսպէս։ (Բեմի վրա վազվռտեց, շրջան արաւ, ձիի նման խրխնջալով)։

ՄԻՆԱՍ.—Էդ շատ լաւ էր. վարձիդ մասին միամիտ կաց։ (Գնաց աջ)։

ՕՀԱՆ.—Հը՛մ, ես քեզ ցոյց կը տամ թէ ինչ է նշանակում Օհանի ուսերը կծոտել. գլխիդ մի խաղ խաղամ, որ սուտ գժութիւնդ ղորթի փոխվի։ (Ձևանալով խեղճ սգաւոր)... Օ՜ օ՜...

ՏԵՍԻԼ 5.

ՕՀԱՆ և միջի դռնից ԹՈՄԱՍ ու ՂՈՒԿԱՍ

ԹՈՄԱՍ (անհոգ ծխելով, ձեռին փայտ)։—Հ՞ը... ինչ ես սուզ հագել։

ՂՈՒԿԱՍ.—Որտե՞ղ է իմ սիրելի եղբայրս։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библ.
7/XI-1922
имени А. Масникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՕՀԱՆ. –Օհ, մի հարցնէք. նոր շատ տեսակ կատաղել էր, ոտքս էլ խածեց։

ՂՈՒԿԱՍ.—Դէ ասա տուններս քանդվել է էլի։

ՕՀԱՆ.—Իրա տունն է քանդվել, ձեզ ինչ է եղել. դուք հոբէս, փառք Աստծոյ, փորներդ կուշտ, ողջ-առողջ եկել էք տելեգրաֆի փայտի պէս առաջիս ցցվել։

ԹՈՄԱՍ.—Սրանք ինչ. որտեղ է հարսը։

ՕՀԱՆ.—Գնացել է սատանայ բռնող պառաւի մօտ։

ՂՈՒԿԱՍ.—Ախորժակը ինչպէս է եղբօրս... այդ ասա։

ՕՀԱՆ.—Էհ, մի հարցնէք. շատ վատ։ Առաւօտ էն գլխից 5—6 բաժակ քաղցր թէյ, 30—40 ձուի թանախորով, մի էսքան (մեծ) խոզի միս, մի էնքան էլ հաւի միս, տակից գլխից մի-մի կօնեակ, մինչև հա նախաճաշիկ։ Նախաճաշին էլ 3 բաժակ սուրճ, 4—5 կտոր տորդ, 7—8 կատլէտ, մի էսպէս երշիկի կտոր, տակից գլխից մի-մի կօնեակ, մինչև հա ճաշ։ Ճաշին էլ 2 շիշ գինի, 10 շամփուր սուկիի խորոված, 3—4 աման փլաւ, մէկ կաքաւ, 3—4 կտոր կարմիր ձուկ, 2 ֆունտ խնձոր, տակից գլխից մի-մի կօնեակ, մինչև հա երեկոյեան։ Ընթրիքին էլ 2 շամայի, մի հատ ֆասեան, ֆունտ ու կէս աղանձած ֆիստակ, մի 2 շիշ գինի, կէս հնդկահաւ, տակից գլխից մի-մի կօնեակ, մինչև հա առաւօտ։

ԹՈՄԱՍ.—Նա որ էդքան է տրաքվում, ուրեմն էդ ցաւը կը մնայ նրա մէջ, մինչև հա՜ սատկելը։ Թիւ էդպէս լափելուն...

ՂՈՒԿԱՍ.—Ա՛յ տղայ, այդ ո՞ր օրից է... Նա հօ կը տրաքվի միջից...

ՕՀԱՆ.—Ես էլ այն եմ ասում, որ գոնէ քաղաքը էժանութիւն կընկնի, թէ չէ՝ ձու չի ճարվում։

ԹՈՄԱՍ.—Հիմա տեսա՞ր, Ղուկաս, թէ ինչից ն է գժվել։

ՕՀԱՆ.— Էհ, հոգուդ մեղք մի անիլ, Թոմաս ապեր. իմ կարճ խելքովս, սուրբից պատահած բան է։

ՂՈՒԿԱՍ.—Եղբայրս վա՛յ։ Հիմի ի՞նչ անենք, Թոմաս։

ԹՈՄԱՍ.—Խորհուրդ կանենք, Ղուկաս, շտապելու բան չկայ։

ՕՀԱՆ.—Դէ դուք էք իմանում ձեր եղբայրը, էլ ես նրա տէրը չեմ... (Գնաց աջ դռնով)։

ՏԵՍԻԼ 6.

ԹՈՄԱՍ և ՂՈՒԿԱՍ

ՂՈՒԿԱՍ. –Դու բանը ուշացրու, Թոմաս, դու հէնց ուշացրո՞ւու�...

ԹՈՄԱՍ.—Ախար մարդու գլխին ձի չի քացով տուել, ազգներումս չկայ, հրդեհից չի վախե-

ցել, տան վրա մարդ չի եկել, ոտքի տակ կամուրջ չի խորտակվել, զանգակատնից չեն ներքև գլորել, ախար ի՞նչ պատահեց նրան է։

ՂՈՒԿԱՍ.—Հերի՞ք է, Թոմաս, թէ չէ, Աստուած վկայ, բանը այնտեղը կը հասցնես, որ վերջը մեր մէջ կռիւ կը պատահի։

ՏԵՍԻԼ 7.

ԹՈՄԱՍ, ՂՈՒԿԱՍ, ՕՀԱՆ և ՄԻՆԱՍ

(Սրանք մտան աջ դռնով)։

ՕՀԱՆ.—Վա՜յ, վա՜յ...

ՄԻՆԱՍ (խրտնած կովի նման վազեցնում է նրան, բեմի վրա պտտեցնելով)։ Ֆֆֆը՞...

ՕՀԱՆ.—Վա՜յ, վա՜յ... վա՜յ ուսերս, վա՜յ։ Ա՛յ ես ձեզ մատաղ, էդպէս էլ բանն։ Եղբայրն էք, ինչ հօրս ցաւն էք, եկէք ձեր եղբօրը տէրութիւն արէք էլի՞... Ո՞ւուու... խրտնած գոմէշ...

ՂՈՒԿԱՍ.—Իսկ սրան ի՞նչ կասես, Թոմաս... Եղբայրս վա՜յ...

ՄԻՆԱՍ (նստելով).—Հըրֆֆը՞... ո՞վ էք դուք։

ՂՈՒԿԱՍ.—Մենք ենք, Մինաս, լա՛ւ մտիկ արա, եղբայրներդ ենք։

ՄԻՆԱՍ.—Հըրֆֆը՞... (վեր նայեց)։ Պառա՛ւ, քո տունդ երկնային թագաւորը քանդի, ինչ ես ուզում ինձնից։ Հ՞ը... թուղթը՞... Դէ թուղթը թուղթ է, թանաքը՝ թանաք, գրիչը՝ գրիչ... Դէ գրում

են՝ գրեն էլի։ Ախ, սիրելի եղբայրներ, ուր էք, ուր է...

ՂՈՒԿԱՍ.—Եղբայրդ քեզ մատաղ լինի, Մինաս ջան, այստեղ եմ, այստեղ, չես ճանաչում։

ՄԻՆԱՍ.—Ը՛մ... ֆը՛...

ՕՀԱՆ.—Մի մօտենալ, Ղուկաս ապեր, հիմա նրա կատաղելու ժամանակն է... քիթդ կըկծի։

ՂՈՒԿԱՍ.—Մինաս ջան։

ՄԻՆԱՍ.—Հը՛ըբֆֆ...

ԹՈՄԱՍ (անհոգ նստել է)։—Մի՞շտ էսպէս է, թէ երբեմն փոխվում էլ է։

ՕՀԱՆ.—Փոխվում է, Թոմաս ապեր. երբեմն էշ է դառնում և էնպէս է զառում, որ քիչ է մնում ականջիս վարագոյրը պատռվի։ Երբեմն էլ ժամերով խոզ է դառնում ու մի գլուխ խուռտ-խուռտ, խուռտ-խուռտ։

ՄԻՆԱՍ (կողմ)։—Ինչ ստեր է փչում։

ՂՈՒԿԱՍ.—Քո չարը տանեմ, Մինաս ջան, սիրտդ ի՞նչ է ուզում։

ԹՈՄԱՍ.—Ի՞նչ պէտք է լինի. աշխարհքի բոլոր հարստութիւնը։

ՕՀԱՆ.—Էդ մէկը ճշմարիտ է, շատ ագահ անիրաւն է։

ՂՈՒԿԱՍ.—Մինաս ջան... այ ձեզ մատաղ... իսկի տեսէք ասածս հասկանում է։

ՕՀԱՆ.—Ես ձեզ մի բան ասեմ. կարելի է սրան կատաղած շուն է խածել։ Բերենք թոկով

ոտ ու ձեռքը կապոտենք, տանենք սառցաջրի մէջ էնքան նստեցնենք, որ խելքը գլխին գայ։

ՂՈՒԿԱՍ (հրեց)։—Մէկ էն կողմ կորիր Է։

ՕՀԱՆ.—Մի բարկանաք։ Կամ եկէք տկլորացնենք, բաղնիսից 2 քսակքսող բերենք, թաց կտաւները ոլորած ընկնեն էնքան տան էդ կողքաճաղերին, որ խելքը տեղը հաւաքվի։

ՂՈՒԿԱՍ (աւելի պինդ հրեց նրան)։—Տօ, ձայնդ կտրիր, կորիր Է։

ԹՈՄԱՍ.—Սպասիր, Ղուկաս. նա խելօք բան է ասում։

ՕՀԱՆ.—Պատմեմ ձեզ գլխիս եկածը։ Մէկ օր գիւղում միտքս ծուվեց. էլ չուզեցի բան անել։ Արի, ասեցի, ինձ սուտ-սուտ գժութիւնի դնեմ. ասեցի ու արի։ Յետոյ շատ դէս-դէն արին, բան չեղաւ։ Վերջը գիւղի շուն-անիրաւ գզիրը հրամայեց՝ 4 տղամարդ գոմէշի ճիպոտներով ընկան. վրաս, ինչ ես լակել թթու մածուն, էնքան տուին, էնքան տուին, որ ճարս կտրված ցեխ կերած շան նման փոշմանեցի, խելքի եկայ։

ՄԻՆԱՍ (կողմ)։—Տեսնում Է՞ք անզգամին...

ԹՈՄԱՍ.—Ուրիշ հնար չկայ... պէտք է մի էդպէս բան փորձել...

ՂՈՒԿԱՍ.—Տօ, դու էս լակոտի (հրեց Օհանին) խելքով ուզում ես շան մէկը գայ քո մեծ եղբօրդ մարմնին ճիպոտ խփի։

ՕՀԱՆ.—Դէ, տնաշէն, ես հօ չեմ ասում էդ անագին պատուաւոր մարդուն հէնց շանատակ ա-

նեն։ Բանը կանենք կամաց-կամաց, կամաց-կամաց։ Թոմաս ապեր, էլի դու ես բան հասկանում. դու թոկը քցիր կոներին, ես գնամ շամփուրը տաքացնեմ։

ՄԻՆԱՍ (յարձակվեց Օհանի վրա, ծեծելով վազեցրեց)։—Մակո, մակո, պառաւ։

ՕՀԱՆ.—Վա՛յ, վա՛յ։ (Ծածուկ)։ Ա՛յ մարդ, ցաւում է, հանգարտ։

ՄԻՆԱՍ (ծածուկ)։—Իսկ դու ինչո՞ւ ես մոռացել թուղթը... ինչ սատանայական խորհուրդներ ես տալիս... պառաւ...

ՕՀԱՆ.—Պառաւը ես չեմ. պառաւը քո կնիկդ է, ես չեմ... (Ազատվեց)։ Է՛ս բոպէիս ես կըգնամ պոլիցիային կըյայտնեմ, թող իսկոյն գան այս կատաղած շունին գժանոց տանեն։

ՄԻՆԱՍ (բղաւեց)։—Խաչատո՞ւր, Խէչէտո՞ւր, Խըչըտո՞ւր...

ՕՀԱՆ.—Աչքներդ լոյս, հիմա էլ պառաւի ծամը բաց թողեց, Խաչատուրի պոչից բռնեց։

ՄԻՆԱՍ (նորից յարձակվեց նրա վրա և վազեցնելով, ծածուկ)։—Ասա՛ նրանց, թող ստորագրեն, ասա՛ նրանց, թող ստորագրեն։ (Փախաւ աջ)։

ՏԵՍԻԼ 8.

ՕՀԱՆ, ԹՈՄԱՍ և ՂՈՒԿԱՍ

ՕՀԱՆ.—Օ՛խ, օ՛խ, օ՛խ... Աստծոյ սիրոյն, դուք լինէք էն էն էն սուրբ հայոց հացը։ Մին

մօտեցէք էն թղթին, ազատեցէք նրան պառաւ դեի ոնխից։

ԹՈՄԱՍ.—Խելքիդ ինչ ես գօր անում. մեր ձեռքին ինչ կայ որ։

ՂՈՒԿԱՍ. – Չէ, Թոմաս. դու ինչպէս կուզես, ես ոչինչ չեմ խնայիլ նրա համար։

ԹՈՄԱՍ.—Գիտե՞ս ինչ կայ, Ղուկաս... (Քաշեց մի կողմ փսփսալով)։

ՕՀԱՆ (կողմ)։—Էս բոպէիս փափկացնեմ։ Թոմաս ապեր, դու էլ մի քիչ խնամքի եկ, սիրտդ փափկացրու. հօ տեսնում էք մարդը ինչքան է ճաքճաքին գալիս, մէկ էն թղթին ձեռք քաշէք։

ԹՈՄԱՍ (հրեց նրան)։—Տօ, դու էլ ինչ ես խանգարում է։

ՕՀԱՆ.—Թանկագին Թոմաս ապեր, ես քո ոտքիդ տակի հողը։ Իսկական խելքի տոպրակ, բարի, քրիստոնեայ և օրհնված մարդ։ Քո ամեն մի խօսքիցդ մարգարիտ է կաթում, և շարժմունքիցդ էլ երևում է, որ բռնել ես Աստծոյ սահմանած ուղիղ ճանապարհը և ճգնաւորի նման գնում ես... գնում։

ԹՈՄԱՍ (հրեց նորից)։—Տօ, ձեռք չե՞ս վերցնելու։ (Նորից փսփսոց)։

ՕՀԱՆ.—Ախ, արքայութիւնի բաժին, անմեղ աղաւնի Թոմաս ապերս։ Մենք ամենքս էսօր կանք, էգուց ոտքներս մեկնելու ենք, և չկայ մին մեռել, որին տանելուս ոտքերի տեղ գլուխը առաջ տանէին։ Եւ ամենքս էլ ահեղ դատաստանի առաջ

տկլոր ենք լինելու կանգնած, այսինքն պատանը ուսներիս քցած, ինչպէս Ադամը դրախտի մէջ, որ մէկ քիթ սրբելու թաշկինակ էլ չունէր։

ԹՈՄԱՍ (նոյն)։—Տօ, ինչ ես տիզ դառել կպել պոչներիցս է։

ՂՈՒԿԱՍ.—Ես քո միտքդ չհասկացայ, Թոմաս, չհասկացայ, չէ, չէ։

ԹՈՄԱՍ.—Իմ միտքս այն է, որ մեռնել կայ, ապրել կայ։ Ասում են, Մաֆուսալան 900 տարի ապրեց. իհարկէ, կապրէր. մուրհակն էր բողոքի գնում, թէ որդին էր Պետերբուրգից փող պահանջում։

ՂՈՒԿԱՍ.—Ոսկի եղբայրս ձեռքիցս գնում է, իսկ դու տես ինչի մասին ես խօսում։ Եղբայրս վայ։

ՕՀԱՆ.—Ախ, Ղուկաս ապեր, մի յանդիմանիլ նրան։ Ես իմ Թոմաս ապերիս հոգիի էն էն էն մէջն եմ ճանաչում։ Նա կըփափկի, Աստուած վկայ, կըփափկի և կըդառնայ ինչպէս ձուից նոր դուրս եկած լըկոռի փմբուլ։ Դու նրա էնպէս խօսելուն մի նայիլ, էս բոպէիս նրա սիրտը խընամք կընկնի և նա կըսկսի մեզ ողորմել։

ՂՈՒԿԱՍ (հրեց նրան)։—Դու էլ ինչ ես ցանցառ-ցանցառ դուրս տալիս։

ՕՀԱՆ.—Թոմաս ապեր, փափկիր, փափկիր...

ԹՈՄԱՍ (հրեց)։—Տօ մի խանգարիլ է. Տէր, մեղայ քեզ, Աստուած, հա։ (Փսփսաց եղբօր հետ)։

ՕՀԱՆ (կողմ)։—Թիւ, քարի տղայ, քար։ Մէկ

էլ փորձեմ։ Թոմաս ապեր, դու լինես էն էն էն էն քո սրա-նրա առաջին կոտրտվող կնկանդ արևը, մին կատարեցէք էն պառաւի հրամանը։

ԹՈՄԱՍ (հրեց նրան. նա ընկաւ եռքի վրա)։—Տօ լիրբ, անպիտան, ինչպէ՞ս ես համարձակվում... ուզում ես ջարդե՞մ գլուխդ։

ՕՀԱՆ (սաստիկ բարկացած եկաւ ոտքի)։—Ա՛յ ա-նասուած, մէկ էն թղթին չէք մօտենալու. հօ ձեզ չի՞ ուտելու։

ԹՈՄԱՍ.—Ի՞նչ թուղթ է է՛... (վերցրեց նայեց)։ Հը՛մ, դէ էդպէս ասա էլի։ (Մինասը դիտում է աջ դրա-նից)։ Ամբողջ օրինագիրքը անգիր գիտէ. ես չե՞մ ճանաչում իմ եղբօրը։ (Ղուկասին)։ Առ կարդա և հիացիր։

ՕՀԱՆ.—Ի՞նչ է գրած, Թոմաս ապեր։ Չի՞ լինիլ, որ մի գրիչ էլ դուք ճլվզտացնէք տակին, թէ ուրեմն՝ «յօժար եմ թղթիս—Ղուկաս, Թոմաս»։

ՂՈՒԿԱՍ (կարդաց, աչքերը չռեց)։—«...որ ես բա-ժանված եղբայր եմ և իմ եղբայր Մինասից ոչինչ պահանջ չունեմ...»։ Սա ի՞նչ բան է, տո։

ՏԵՍԻԼ 9.

ՕՀԱՆ, ԹՈՄԱՍ, ՂՈՒԿԱՍ և ՄԻՆԱՍ

ՄԻՆԱՍ (եկաւ աջ կողմից)։—Խէչէտօ՛ր... Խը-չրտո՛ւր... Խաչատո՛ւր։

ԹՈՄԱՍ.—Մինաս, էդ ո՞ր Խաչատուրն է, էն,

որի ձին կերաք, թէ էն, որի տունը կլանեցիր։

ՄԻՆԱՍ (գնաց Թոմասի վրա)։—Խաչվէտոր, պառաւ, Մակօ...

ԹՈՄԱՍ (անյողդողդ)։—Լաւ, լաւ։ Ցետ քաշվիր, խելօք կաց։

ՕՀԱՆ (Մինասին ծածուկ)։—Հէր օխնած, էդ Մակօն էլ ոբտեղից հնարեցիր. գժվում ես, մարդավարի գժվիր էլի։

ՄԻՆԱՍ.—Երգիր ինձ հետ (բռնեց նրան)· բէ, բէ, բէ...

ՕՀԱՆ.—Բէ, բէ, բէ...

ՏԵՍԻԼ 10.

ՕՀԱՆ, ՂՈՒԿԱՍ, ԹՈՄԱՍ, ՄԻՆԱՍ և ԳԱՅԻԱՆԷ

ԳԱՅԻԱՆԷ (մտաւ միջի դռնից)։—Այդ ինչ է, էլի սկսվել է։ Մինաս ջան, Մինաս։

ՕՀԱՆ (ծածուկ քաշեց Գայիանէին մի կողմը)։—Աչ քըդ լուսի, աղջիկ պարոն. հոգ մի անիլ և մի վախիլ—ալէլուիա. բանի միջից բան դուրս եկաւ—ալէլուիա. ոչինչ չկայ, շատ, շատ լաւ է և լաւ կուլի—ալէլուիա։

ԳԱՅԻԱՆԷ (հրեց նրան)։—Դու ինչ ցնդվեցիր։ Մինաս ջան...

ՕՀԱՆ (նոյն)։—Ուբախութեան ժամ է արդէն,

աղջիկ պարոն—ալէլուիա, և ցնծութեան, աղջիկ-պարոն, աւետիս։ Ձեզ և մեզ մեծ աւետիք—ալէ-լուիա. Աստծոյ սիրոյն հոգ մի անէք—ալէլուիա։

ԳԱՅԻԱՆԷ (հրեց նրան)։—Տօ, դու էլ ինչ խեղ-կատակութեան ժամանակ գտար է, մէկ կորիր է։

ՕՀԱՆ (նոյն)։—Ողջ պատմութիւնը զկեռ չար-ժի—ալէլուիա. չի կարելի ասել բանը—ալէլուիա. պինդ երդված եմ, Աստուած վկայ—ալէլուիա, ալէլուիա։

ԳԱՅԻԱՆԷ (հրեց)։—Տօ, հեռացիր գլխից, խև անիծած, է։ Մինաս ջանն...

ՄԻՆԱՍ (աչքերին բաներ երևացին, խրխնջաց և տրտինգ տուաւ)։—Հիհիհի...

ԳԱՅԻԱՆԷ.—Մինաս ջան, աչքերիդ է երե-ւում. ինչ պատահեց քեզ, ուշքի եկ։

ԹՈՄԱՍ.—Բան չունես, հարս. Թող մի քիչ մեզ ծիծաղացնի։

ԳԱՅԻԱՆԷ.—Թող դու ընկնես նրա դրու-թեան մէջ, թող քո կնիկը ինձ նման դունէդուն ընկնի։ Դուք էք նրան այդ օրի հասցրել (ոտները խփեց գետնին), դուք, դուք, դուք։

ՕՀԱՆ.—Աղջիկ պարոն, սխալ ես. Թոմաս ապերը մի ուրիշ քաղցր մարդ է։

ԳԱՅԻԱՆԷ.—Դու ինչ ես մէջ տեղ ընկել, յի-մար շուն (հրեց նրան)։

ՕՀԱՆ (կողմ)։—Տես, էս կնիկը մեր բոլոր պլանները քանդելու է։ (Ծածուկ)։ Աղջիկ պարոն,

անց կաց միւս կողմ—ալէլուիա. բանի մէջը շատ մեծ բան կայ—ալէլուիա։

ԳԱՅԻԱՆԷ.—Մինաս ջան, խելքի ծով էիր, հիմա քեզ ինչ պատահեց, 100 մարդկանց մէջ խելքով ամենից բարձր իմ Մինաս. կենդանի-կենդանի ինձ գերեզման դրիր, Մինաս. աչքերս կուրանար, քեզ էս օրին չտեսնէի, Մինաս։

ՕՀԱՆ.—Հէրիք սրտներս քանդես, աղջիկ պարոն. ախար մենք էլ մարդ ենք։ (Ծածուկ)։ Ես քեզ ասում եմ բերանս կապ է—ալէլուիա. երդում-կե-բած-եմ, չեմ կարող բերանս բացել—ալէլուիա. ոչ մի բանից մի վախենալ—ալէլուիա. նրան խելքի բերելը ոչինչ բան է—ալէլուիա. որ ուրեմն թէ՝ սրանք բան չհասկանան—ալէլուիա։ Թիւ, ես երդում հնարողի հէրն եմ անիծել հա։

ԳԱՅԻԱՆԷ.—Մինաս ջան... Մինաս...

ՂՈՒԿԱՍ.—Եղբայրս վայ, եղբայրս վայ...

ԹՈՄԱՍ.—Սպասեցէք, ես ձեզ մի բան եմ խնդրելու։ Մինաս։

ՄԻՆԱՍ (Թռաւ սեղանի վրա)։—Մակո, մակլակո, մակլակակո...

ԳԱՅԻԱՆԷ.—Վայ, սիրաս գնաց. նա իրան պատուհանից փողոց կըքցի, մի թողնէք։

ՂՈՒԿԱՍ.—Մինաս ջան։ Այ տղայ, Օհան, մի թողնիլ։

ՕՀԱՆ (Թռաւ սեղանի վրա)։—Պարոն...

ԹՈՄԱՍ (Ձեռի փայտով խփեց Օհանին)։—Բաց

թող, իշիր ներքև։ (Օհանը բաց թողեց)։ Դէ, Մինաս, քցիր քեզ փողոց մէկ տեսնենք։

ՄԻՆԱՍ.—Թուղթը՞... (պպզեց) դէ գրում են գրեն էլի։

ԹՈՄԱՍ.—Լաւ, ինչաս չունի. թղթի հետ մենք մին կերպ կանենք։

ՄԻՆԱՍ.—Հը՜, հը՜ (գժի ուրախութիւն), մկո, կակո, մակո...

ՂՈՒԿԱՍ.—Հէնց իմանաս այդ բանը նրան դուր եկաւ։

ՕՀԱՆ.—Ապա ես, որ էսքան գլուխս կոտրում եմ, ինչ եմ ասում։

ԹՈՄԱՍ.—Մինաս, եթէ այս թուղթը ստորագրենք, խելքի կըգա՞ս, թէ ոչ։

ՂՈՒԿԱՍ.—Մինաս ջան, խօսիր. էդ է, քիչ-քիչ խելքդ տուն է գալիս։

ՕՀԱՆ (ծածուկ)։—Պարոն, նա քեզ ձեռք է քցում. աւելի լաւ է բանը հանաքի քցիր կորչի գնայ։

ՄԻՆԱՍ (ծածուկ)։—Ձայնդ կտրիր, քիչ է մնացել։ Մակո, մակլակո։ (Այդ ասելով թաւ ցած, բռնեց Թոմասին ու Ղուկասին և մօտեցրեց թղթին)։ Մկո, մկո, մկո...

ԳԱՅԻԱՆԷ.—Մինաս ջան... էլի սկսեց։

ՕՀԱՆ (թաւ ցած, տարաւ Գայիանէին մի կողմ)։—Աղջիկ պարոն, սիրտս ճաքեց... բանը այդ է որ... (սկսեց ծածուկ փսփսալ)։

ԹՈՄԱՍ.—Դու ինձ ասա, Մինաս, սա ինչ

թուղթ է... դու մեզ յիմարացնել ես կամենում, թէ ինչ...

ՂՈՒԿԱՍ.—Մինաս ջան, զորթ, սա դու ես գրել, թէ նոտարն է հնարել...

ԹՈՄԱՍ.—Ուրեմն քո միտքդ այն է, որ մենք ստորագրենք և չոր տափին մնանք. այո՞։

ՂՈՒԿԱՍ.—Թոմաս, արի, Տէրը իրան հետ, ստորագրենք գնայ։

ՄԻՆԱՍ (թոչկոտաց ուրախութիւնից)։—Մկա՛, մը-կա՛, մկլա՛կ...

ԹՈՄԱՍ.—Ինչպէ՞ս չէ, թոչկոտիր, հէնց էդ է որ ստորագրեցինք. ականջիդ ետևը կըտեսնես, Մինաս։

ՄԻՆԱՍ (փոխվեց և գլուխը բացեց)։—Ի՞նչ է պատահել։

ԹՈՄԱՍ.—Դժողք ու կրակ է պատահել գըլխիդ, այ թէ ինչ։ Թիւ քո երեսին։ (Դնաց միջի դռնով)։

ՂՈՒԿԱՍ.—Ա՛յ ես քեզ մարդ ասողին ինչ ասեմ... էլ բանը գլխիցդ կորվե՞լ էր։ Թիւ քո երեսին։ (Դնաց միջի դռնով)։

ԳԱՅԻԱՆԷ (օհանին)։—Ճշմարիտ ես ասում... ինչ թուղթ, ինչ թուղթ։ (Առաւ, նայեց Մինասին ոտքերը գետնին խփելով)։ Տօ, օր ծերութեան էլ գըլխիցդ խայտառակութիւնը կորվե՞լ էր։ (Պատռեց թուղթը և քցեց Մինասի երեսին)։ Ա՛ռ էլ, առ էլ։ Թիւ քո երեսին։ (Դնաց աջ)։

ՄԻՆԱՍ.—Տօ, քեզ ո՞վ հրաման տուաւ, որ իմ գաղտնիքս յայտնես նրան...

ՕՀԱՆ.—Պարոն... կկկնիկարմատ էր, խեղճը եկաւ, լեզուս չհամբերեց... խիսօքը բբերանիցս դդուրս թթռաւ... աղաչում եմ ներիր ինձ... ամենքդ էսօր ծեծեցիք ինձ...

ՄԻՆԱՍ.—Այդ դեռ քիչ է քեզ, սուտ երդում ուտող։ (Սկսեց ծեծել, վազեցնելով բեմի վրա)։ Ա՛յ քեզ, ա՛յ քեզ...

ՕՀԱՆ.—Ա՜... Խաչատուր, պառաւ... Մակ... մակլակ... մակլակակ... (մինչ վարագոյր)։



Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р.А. Публичная Библиотека
7/II-1922
Ստեփան, Մասնիկյան
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գին 1 20 կոպեկ

Պահեստը — Թբիլիսի՝ «Դուստուրքերգ» գրավաճառ.

Բարգա՝ «Սոսրատնիկ»